

ՀՆԴԵՎՐՈՊՊՈՂԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍՏԵՓԱՆ ԱՀՅԱՆ (Փարիզ)

1

ՍՏԵՓԱՆ ԱՀՅԱՆԻ ԳՐԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԻՔՐԵՎ
ՀՆԴԵՎՐՈՊՈՂՈՒԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՄԲԱ

Հնդեվրոպական ժողովուրդների ավանդությունների բաղդատական վեր-
յուծությունը երևան է բերում առասպելական ինքնաների մի ամբողջություն,
որը հնդեվրոպական բնասանիքի բնդհանուր մշակութային ժառանգությունն
է: Այսպես, սույն հոդվածում մենք կրաղդատենք ջրերի ժայթքման հետ կապ-
ված հայկական ավանդությունը իտալական, պարսկական և հռոմեական
նույնաթեմա ավանդությունների հետ:

Հայկական ավանդադրույցները Հայաստանի երեք լճերի համանման
ծագում են վկայում. հորդառատ աղբյուրները ժայթքում են դուրս, որովհետև
ջրարեր մարդիկ մոտանում են փակել աղբյուրի ակր:

Աշոտ Աբրահամյանի կողմից դրի առնված¹ ավանդությունը մեզ բա-
լատարում է Սեանա լճի առաջացումը: Բերենք այդ ավանդությունը ամբող-
ջությամբ. «Սեանա լճի տեղում առաջ ցամաք է եղել՝ անառապատ բլուր-
ներով, ծաղկավետ դաշտերով ու բերրի վարելահողերով: Գլուղին մոտիկ
լլրի տակ եղել է մի առատ աղբյուր, որից ջուր վերցնելիս ղլուղացիները հա-
նում էին ակունքի ահաղին փակելը և ապա զղուշությամբ հարմարեցնում
իր տեղում:

Սի երեկո ղլուղի հարսներից մեկը ջրի է դնում աղբյուրը, հանում է փա-
կիչը, կուծր լցնում ու դալիս առն՝ մոտանալով փակել ակունքը: Ջուրը դուրս
է հորդում, ծափալվում շորս կողմ, երբ այն հասնում է անակներին, բնակիչ-
ները փախչում են, տակով՝ «Քար դառնա՝ ով բաց է թողել ակունքը»: Եվ
մոտացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը անընդհատ հոսելով կազմում
է Սեանա յիճը, որի մակերեսից հաղիվ վեր է բարձրանում քարացած հարսի
պուխը (Հարսնարար)»:

Ուրիշ երկու հայկական բանահյուսական երկեր մեզ ավանդում են Կալ-
լատվա՝ և Չրլղրը՝ լճերի առաջացման մասին: ավանդադրույցներ, ըստ որոնց
'իշյալ լճերի ծագումը նույնական է առաջին՝ Սեանի մասին ավանդության
հետ, միայն այն տարբերությամբ, որ պատմի մասը բացակայում է:

Փոքր Գլուղեղիլը² համեմատել է իտալական, հռոմեական և պարսկա-
կան հետեյալ երեք երկերը և հայանարերել է ջրի ժայթքման հնդեվրոպա-
կան թեման: Համաձայն այդ թեմայի, ջրի ժայթքումը հետևանք է այն ան-

¹ Տե՛ս Ա. ր. մ. Ղ. ա. ն. յ. ա. ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 80:

² Գրի Լ. առել Մարտիրոս Մարյանը 1903 թ.: Տե՛ս Մ. Ս. ր. յ. ա. ն. Գրառումներ իմ
կյանքից. պրոբ առաջին, Երևան, 1966, էջ 65:

³ Ա-Գ. ո. Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները. 1912, էջ 203:

⁴ Georges Dumézil. Mythe et Epopee. III, p. 1981.

ձանց վարժունքի, ովքեր կատարում են այնպիսի արարքներ, որոնց իրավունքը չունեն:

Իռլանդիա—Առասպելական հերոս Նեշտանի ջրհորը կամ աղբյուրը (իռլանդերեն *torun* բառը միաժամանակ նշանակում է և՛ աղբյուր, և՛ ջրհոր) նշանավոր էր իր գերբնական հատկություններով. իրեն մերձեցողների աչքերը պայթեցնում էր, բացառությամբ Նեշտանի և իր երեք մառանապետների:

Ըստ այս ավանդության մի տարբերակի, Նեշտանի կին Բոյանդը սիրաբանում է Դագդա շաստձու հետ և նույն օրը ծննդաբերում է մի արու զավակ՝ Բոյանդը վճռում է լվացվել Նեշտանի աղբյուրի ջրով՝ մեղքերից մաքրագործվելու համար: Սակայն, երբ մոտենում է ջրհորին, ջուրը ժայթքում է նրա վրա: Կինը փախչում է ալիքի առջևով, որը գնում է դեպի ծով: Ըստ մի բանաստեղծության⁵, կինը անհետ կորչում է: Այդպես կազմվում է Բոյանդ գետը, որ այժմ կոչվում է Բոյ-նը:

Առասպելի մյուս տարբերակում⁶ Բոյանդը մոտենում է ջրհորին՝ դոռոզամտաբար կամենալով իր գեղեցկության ուժը համեմատել ջրհորի գորութայն հետ: Նա երեք պտույտ է կատարում ջրհորի շուրջը և ջրհորից դուրս են ժայթքում երեք ալիք՝ կնոջից պոկելով զիստը, ձեռքը և աչքը: Կինը փախչում է դեպի ծով՝ իր հետևում ունենալով ջրի հորձանքը:

XI դարի մի բանաստեղծության⁸ մեջ հիշված է Բոյանդ գետը: Գետի նկարագրության մեջ ընդգծված է ջրի հավերժահոս լինելու դադափարը: Գետը շարունակվում է ծովի մակերեսով և հատակով ու անցնում է բոլոր աշխարհամասերի ընդերքով՝ տարբեր անուններով դուրս դալով հողի տակից:

Հռոմ—Ըստ անտիկ պատմաբանների⁹, Վեյես քաղաքի պաշարումը հռոմեացիների կողմից տեղի է ունեցել տարվա մի ալիսի շրջանում, երբ բոլոր գետերն ու ջրերը իրենց ամենից ցածր մակարդակի վրա էին: Այսին լիճը հանկարծ իր ափերից դուրս է գալիս և կազմում դեպի ծով թափվող մի գետ: Հռոմեացիները վախենալով այդ մասին հարցում են անում մի էտրուսկ գուշակի և նույն նպատակով մարդ են ուղարկում Դելֆոս քաղաք: Դելֆոսյան տաճարից և էտրուսկ գուշակից ստացված պատասխանները գրեթե նույնն էին. Վեյես քաղաքը հռոմեացիները շեն կարող կործանել, մինչև չփոխեն Այսին լճից սկզբնավորված ջրի ուղղությունը, որպեսզի այն այլևս ծով չթափվի: Դելֆոսի պատասխանում գտնում ենք լճի բարձրացման պատճառը: Միայնաբար ընտրված մաժիստիսանների ծիսակատարությունները շաստվածների կողմից ընդունվում են որպես օրինազանցություն:

Հռոմեացիները, անսալով գուշակներին, կրկին անգամ ծեսեր են կատարում և տանում անհրաժեշտ բոլոր աշխատանքները, որպեսզի լճի ջրերի հունը փոխեն և ծովից դրանց ուղղությունը շեղեն դեպի հողային տարածքներ:

Պարսկաստան—Պարսկական հավանության հանդիսանում է փառքի խորհրդրդանիշը: Լուսապսակի ձևով հավանան փայլում է պարսից արքաների դուրիսների վրա: Որևէ թագավորի տապալումից հետո հավանան մեկընդմիջտ լքում է նրան:

⁵ E Gwynn. The Metrical Dindshenchas, III. Todd lecture Series 10, 1913, p. 31—39.

⁶ E Gwynn. Eriu, 7, 1914, p. 210—238. Ch Guyon arc'h. Celticum, 15, p. 323—327.

⁷ Dindshenchas de Rennes.—Revue Celtique, 15, 1894, p. 315.

⁸ E. Gwynn. Op. cit, p. 26—33.

⁹ Gicéron. De la Divination, I, 100, 2, 33, Tite Live, 5, 15—17. Denys d'Halicarnasse. Antiquites Romaines. 12, 11—17. Plutarque. Vie de Camille, 3-4.

Ավիեստայում (Յաշտ, 19, 5—64)¹⁰ Խվարնան պատկանում է նախ և առաջ Աշուրամազդային և մյուս դիցային անձնավորություններին: Ապա Խվարնան պատկանում է առաջին առասպելական թագավորներին, Միթրային և այլ հերոսներին: Չար և Բարի Ուժերի (Ողիների) միջև տեղի ունեցած պայքարից հետո Խվարնան ուղղում է դեպի Վուրուկայա լիճը: Ափում նաբաթը, միամամանակ ջրի ու հրի աստվածը, բռնելով Խվարնային, նրան տանում է խորունկ մի լճի հատակը: Խվարնան պարսիկների մենաշնորհն է, միայն նրանք կարող են Խվարնային հանել ջրի տակից: Բուրանական Ֆրանոսայանը, պարսից ուխտի մշակումը, խորասուզվում է լճի հատակը և երեք անգամ փորձում է ձեռք պահել Խվարնային: Բայց վերջինիս հաջողվում է խույս տալ և գրանով ծնունդ է ապրես երեք դետերի, որոնք լճից դուրս են վազում: Այս գետերից սկզբնավորվում են այլ գետեր:

Ստորև բերվող աղբյուրակում մենք դուրսհեռաբար նշում ենք այս շորս երկերում միմյանց համապատասխանող կետերը:

Մեզ համար հատկապես հետաքրքրական են հայկական և իտալական տոտեմիկների միջև տեսանկյունի ընդհանրությունները. հալ հարսը և Նեշտանի կինը հետապնդվում են դեպի լիճ կամ ծով վազող ջրի կողմից և կորչում ալյ ջրի մեջ:

Հոռմեական և պարսկական գրույցներում լճերն են, որ ծնունդ են տալիս այդ Հոռմեական հորդումին, իսկ իտալական ավանդության մեջ ջրհորը կամ աղբյուրն է, դեռ սկզբնավորում: Հայկական գրույցում առատ աղբյուրն է լիճ ձևավորում: Փայթող ջուրը Իտալանդիայում և Հոռմում կազմում է գետեր, որոնք թափվում են ծովը: Հայաստանում, որ առանց ծովի մի երկիր է, հորդացող ջուրը ծնունդ է տալիս Անանյ լճին:

Հոռմեական ավանդության մեջ Հոռմը պիտի պարտություն կրի Վեյես քաղաքի դեմ մղած պատերազմում և կկործանվի, եթե չհաջողվի շեղել ջրերի ընթացքը դեպի ցամաք: Մինչդեռ հայ հարսն ու Նեշտանի կինը անհետանում են և ապաստվելու հնարավորության ընտրություն չունեն, ինչպես Հոռմեական գրույցի մեջ: Միայն պարսկական առասպելում է, որ հերոսը չի կարողանում ձեռք պահել աղտոտված գերիշխանությունը: Հերոսի արարքը մահաբեր հանգամանքներ չունի:

Հայկական և պարսկական գրույցների միջև եղած հատուկ խոտորությունները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ երկուստեք փոխառության հնարավորությունը բացակայում է:

«Ավիեստայում» Ֆրանոսայանը փորձում է գերիշխանության հասնել պարսիկների հանդեպ՝ տիրանալով Խվարնային, որը դանվում է արդեն գոյություն ունեցող լճի հատակում: Այնինչ հայ հարսը դնում է աղբյուր՝ ընդամենը ջուր վերցնելու: Փայթելով Ֆրանոսայանից, Խվարնան երիցս դուրս է թափում ջուրը իր ափերից, որը վերածվում է նույնաչափ գետերի: Իսկ հայկական առասպելի հարսը պարզապես մոռանում է փակել աղբյուրի ակունքը: Պարսկական գրույցում նոր լճի առաջացում չկա:

Ֆրանոսայանը ձախողվում է, բայց չի մահանում, մինչդեռ հայ հարսը բարանում է՝ ծածկվելով լճի ջրով:

Հնդկավրացական շորս ժողովուրդների ավանդությունների բաղդատությունը մեզ թույլ է տալիս տեսնելու նույն առասպելական թեմայի տարբեր տեսլակները՝ տվյալ երկրի պատմաաշխարհագրական պայմանների համաձայն:

Այս համեմատությունը մեզ հնարավորություն է բնօրնում հաստատելու այն, թե ինչպիսի ձևափոխումներով են հանդես գալիս միևնույն թեմայի դանդան աարբեղակները՝ կյանքով շորս ժողովուրդների կյանքի պայմաններից, դարգացման մակարդակներից և երևակայություններից:

¹⁰ Zend-Avesta. James Darmesteter, II, p. 615—633. 1960.

1) Հայաստան	2) Իւլանդիա	Հռոմ	Պարսկաստան
<p>ա. Գլուղացիները պետք է փակեն առատ ջրի ակը՝ չուր վերցնելուց հետո:</p>	<p>Նեշտանից և իր երեք մասնապետներից բացի ոչ ոք չի կարող չրհորից կամ աղբյուրից չուր վերցնել, նույնիսկ մոտենալ դրանց:</p>	<p>Հռոմեացի մաժիստիսաները պետք է ընտրվեն կանոնավոր կերպով, որպեսզի կարողանան կատարել իրենց ծեսերը:</p>	<p>Խվարնան, որ գտնվում է Վուրակաշտ լճի հատակում, պատկանում է պարսիկներին և չի կարող սեփականացվել օտարագրիների կողմից:</p>
<p>բ. Զուր վերցնելուց հետո հարսը մոռանում է փակել ջրի ակը:</p>	<p>Բոյանդը կամ իր հանցանքը բողակելու, կամ իր ղեզեցկության ուժը չրհորի հետ համեմատելու համար գոռոզաքար մոտենում է չրհորին:</p>	<p>Վեյնս քաղաքի պաշարման ընթացքում հռոմեացի մաժիստիսաները, որ ընտրված էին անկանոն կերպով, կատարում են ծեսը Ալպեն լեռան վրա:</p>	<p>Տրանոասյանը, որ պարսիկ չէ, փորձում է Խվարնային դուրս քաշել լճի հատակից:</p>
<p>գ. Աղբյուրից դուրս ժայթքած ջուրը Օրինազանցման հետեւանքը ողողում է ողջ գյուղը և կազմում է Սևանա լիճը:</p>	<p>Երեք ալիք դուրս են ժայթքում չրհորից և անզամալույծ են դարձնում Բոյանդին, որը փախչում է դեպի ծով և իրեն հետևող ջուրը կազմում է ծով հոսող գետ:</p>	<p>Ալպեն լիճը հորդում է և կազմում է մի գետ, որը թափվում է դեպի ծով:</p>	<p>Խվարնան փախչում է երեք անգամ՝ ամեն փախուստի հետ կազմելով նոր գետեր:</p>
<p>դ. Հարսը քարանում է և մինչ ալսօր նրա գլուխը երևում է ջրի մակերեսին:</p>	<p>Բոյանդը կորչում է հավիտենապես այն ջրի մեջ, որի հորդմանը ինքն էր պատճառ դարձել:</p>	<p>Եթե գետը շարունակի հորդել դեպի ծով, Վեյնս քաղաքը պիտի հաղթի Հռոմին, որը վաղ թե ուշ դատապարտված է կործանման:</p>	<p>Տրանոասյանը ձախողվում է և չի կարող երբեք տիրել Պարսկաստանին:</p>

Առկա եզակի խոստորությունները միաժամանակ բացատում են ամեն տեսակի փոխառություն: Մինչդեռ համապատասխանությունները հայասերերում են սխեմային առասպելական թեմայի պատկանելությունը հնդեվրոպական համընդհանուր ժառանգությունը՝ հասկացական հիմքի վրա:

Այդ առասպելական թեման, ինչպես նաև մյուս հնդեվրոպական առասպելական կոտորույցներն ու թեմաները, որ պատում ենք հայ ավանդապատումի մեջ, ավելի հստակ և միանշանակ են դարձնում հետևյալ հարցի պատասխանը: Հավանական բանահյուսությունը իր մեջ պարփակում է արդյոք հնդեվրոպական առասպելների հասուկ անդափոխություններ, առասպելներ, որոնց հայկական տարրերակները ուղղակի փոխառություններ չեն, այլ պատկանում են միասնական հնդեվրոպական բանավեպերին:

2

ՆՐԱՆՍԻԱՅԻ, ՓՈՐՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՃՆԻՒ ԱՌԱՋՈՅՄԱՆ ԹՄԱՆՆԵՐԸ

XIX դարում Ֆրանսիայի արևելքում, Շվեյցարիայի սահմանին մոտ գրի առնված մի ավանդապատում¹ խոսվում է Տեսուրը անունով մի գեատակի մասին, որը միանում է Տուր դեաին: Տեսուրը հսկայի անուն է և, ըստ ավանդության, Տեսուրը դեաակը դոյացել է այս հսկայի քրտինքից: Տեսուրը հրական բանավեպում է քարայրում և, որպեսզի ազատվի, ջանք է գործադրում ճեղքել ժայռը: Սի այդ ճեղքի հետևանքով նրա քրտինքից առաջանում է Տեսուրը գեատակը:

Սի հայկական ավանդության մեջ պատմվում է քաջ ու գեղեցիկ աղջկա մասին, որը գոհ է դառնում շար հարսի նախանձին: Հարսը իր եղբոր միջոցով սպանում է աղջկան: Աղջկա մարմինն ամփոփում են մատուռում և դիշերը լույս է իջնում գերեզմանին: Մատուռը վերածվում է սրբավայրի, մարգրիկ այստեղ են դալիս ուխտի Պատահում է այնպես, որ հարսը ծանր հիվանդանում է և նա էլ է գալիս ուխտ կատարելու: Սակայն դոռան առջև հարսը աանջամահ է լինում և մարմնի քրտինքից առաջանում է մի լճակ, որը կոչվում է Մսփը²: Այս երկու գրույցներում գերբնական ուժերի կողմից պատարավածները (բանավեպայ ազակ, որ հիշեցնում է Արտավազդին և այլ պրոմեթեաների, և տանջվող հարսը) ապարդյուն ջանքեր են թափում փրկվելու համար, բայց սպառվելով ստեղծում են Տեսուրը գեատը և Մոզք լիճը: Այսպիսով, հայկական տարբերակում առաջանում է լիճ, իսկ Ֆրանսիականում՝ գետ: «Ջրի ժայթքման» առասպելական թեմայի համեմատական ուսումնասիրությանը վերաբերող մեր հոդվածում³ նկատում ենք, որ միակ ավանդությունը հայկական է, որի մեջ առաջանում է լիճ, իսկ իռլանդական, հոլանդական և պարսկական գրույցներում գոյանում են գետեր: Սակայն Սևանը, ըստ ավանդության, սկզբնապես ակունք է եղել, որը վերածվել է գետի, հետո դարձել լիճ:

Սիդիոսը իր «Կերպարանափոխություններ» գրքում (8,625—696) հիշատակում է մի լեզնի, որն առաջացել է Փոռուրայում (Փոքր Ասիա): Յուպիտերը և Մերկուրիոսը որոշում են հասարակ ճանապարհորդի կերպարանքով շրջել և փորձել քաղաքի բնակիչների հյուրասիրությունը: Նախ դիմում են հարուստներին, որոնցից մերժման են արժանանում, ապա աղքատներին, որոնք քնդանում են ճամփորդներին մեծ բարեհաճությամբ: Այստեղ ասավածները բացահայտում են իրենց ով լինելը և առաջարկում են աղքատներին:

¹ Aymard, Le Geant du Rocher de Corueille, Le Puy, 1861, p. 18.

² Գրատուր և Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը, հրատարակել է Ա. Ղախանյանը (Ավանդապատում, Երևան, 1968, էջ 79—80):

³ Տե՛ս սույն հոդվածի էջ 189:

րին բարձրանալ քաղաքից հեռու մի բարձունքի վրա: Սրանք, հեռանալով, մի պահ ետ են նայում և տեսնում, որ քաղաքը ծածկված է ջրով⁴:

Այս առասպելական թեման մենք տեսնում ենք ֆրանսիական ու եվրոպական այլ երկրների ավանդազրույցներում, որոնցում հեթանոս շաստվածները փոխարինված են Աստծով, Քրիստոսով և կամ սրբերով:

Ֆրանսիական տարբերակներում Աստվածաշնչի ազդեցությունը տեսանելի է մի այնպիսի մոտիվ, ինչպիսին, օրինակ, բնակիչների մեղքերի պատճառով Սողոմ քաղաքի կործանումն է⁵: Մասնավորապես Ֆրանսիայի կենտրոնական և հարավային մասերում գրի առնված տարբերակներում⁶ տեսնում ենք մերժված հյուրընկալության դիմաց պատժի ավանդությունը, ըստ որի Աստված մուրացկանի տեսքով ներկայանում է քաղաքարևակներին, բայց հանդիպում է մերժումի և կոպտության, նույնիսկ՝ ծեծի, և որոշ մարդիկ են միայն լավ ընդունում: Նրանց էլ Աստված արժանացնում է իր ողորմածությունը՝ առաջարկելով դուրս գալ քաղաքից: Մարդկանց դուրս գալուն պես քաղաքը խորասուզվում է:

Էվլիա Չելեբիի «Ուղեգրության»⁷ մեջ (XVII դար) առկա մի զրույցի համաձայն Նեմրութը (Քել) Վանա լճի շուրջը կառուցել է տալիս մի ամրոց, որի վրա մարդիկ աշխատում են ավելի քան քառասուն տարի: Ապստամբելով Աստծու և Աբրահամի դեմ, Գաբրիել հրեշտակը խփում է լեռանը և կործանում ամրոցը: Աստծու հրամանով լեռը խորտակվում է և տեղը առաջանում է Վանա լիճը: 1846-ին հրատարակված հայկական ավանդազրույցի մեջ⁸ Նեմրութ լեռը խորասուզվում է և նրա տեղում գոյանում է մի նոր լիճ, որի անունը բացակայում է (ամենայն հավանականությամբ դա հենց Նեմրութ լիճն է):

Այս զրույցներում աստվածները (Յուպիտերը, քրիստոնյաների կամ մահմեդականների աստվածները), բնակիչների կողմից նախատված հյուրասիրության մերժման կամ ապստամբության պատճառով, պատժում են մեղավորներին. 1) քաղաքը կամ ամրոցը անցնում է հողի տակ իր մեղավոր բնակիչներով հանդերձ, 2) Ջուրը հանկարծ ծածկում է քաղաքը կամ ամրոցը՝ առաջացնելով լիճ:

Այս առասպելական թեման տարածված էր Անտոլիայից մինչև Ֆրանսիա, ողջ Հռոմեական կայսրության մեջ:

Ինչպես «Քյոթոլի» էպոսը, այնպես էլ էվլիա Չելեբիի հաղորդած զրույցը նոր տարբերակն է արդեն գոյություն ունեցած մի թեմայի, որը եղել է Անատոլիայում, թուրքերի նվաճումներից շատ առաջ:

Թե՛ հեթանոսական ավանդություններում և թե՛ Չելեբիի գործի մեջ երևվում է Աստվածաշնչի ազդեցությունը:

⁴ Ըստ Գիոնիսիոս Հալիկոննացու (1,71) և Ջոնարասի (7,1,3) Ալքի արքա Ալզոլիուսը կամ Ամոլիուսը շանթ առաջացնելու հավակնություն ուներ, և Յուպիտերը, իրեն նախատված զղալով, կայծակ ու անձրև է ուղարկում նրա պալատի վրա: Բարձրանում է Ալպեն լճի ջրերի մակարդակը և ծածկում շուրջը լողը: Այս երկում լիճը արդեն գոյություն ունի և առաջագած չէ հողի տակ մխրճված մի քաղաքի կամ պալատի տեղում: Տե՛ս նաև Georges Du me z il. Mythe et Epopée III, Paris, 1981, p. 67:

⁵ Մենդոց գիրք, 16:

⁶ Տե՛ս V. Smith. Melusine, t. I, p. 327—329; J. F. Bladé. Contes de Gaslogne. Paris, 1886, t. II, p. 147 et հետ., I. Dady. Antologie de l'Albert, t. II, p. 51—59, Albert le Grand, Vies des Saints de Bretagne, Quimper, 1901, Saint Martin de Veron, 96, 3 և 4:

⁷ Թուրքական աղբյուրներ, էվլիա Չելեբի, Գ. Նրևան, 1967, էջ 208—209:

⁸ Ն. Սարգիսյան. Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս. 1846, էջ 273—274 (տե՛ս Ա. Ղանալանյան. Ավանդապատում, էջ 72—73):

Սեանա լճի առաջացման ավանդազրույցի մեջ գյուղը ծածկվում է ջրով քայքայ ախտեղ մեծ տարրերություններ կան: Սպիդիոսի, Չելեբիի և Քրանսիական բանահյուսական երկերում ջուրը մեղավոր բնակիչների պատժի միջոցն է, իսկ Սեանա լճի առաջացման մասին ավանդության մեջ՝

1. Գյուղացիները անմեղ են:
2. Գյուղը հանկարծ շի խորասուզվում ջրի տակ, չնայած ըստ ավանդության, հարսը մոռացած է լինում փակել աղբյուրի ակը:
3. Միակ գո՞ր դառնում է հարսը, բնակիչները չեն տուժում:

3

ՄԱՆԱՄԵՐՁ ՀՆԻՄԱՆ ԹՐԻ ԽՈՐԱՍՈՒՋՈՒՄԸ ԽՐԵՎ ՀՆԻՆՎՐՈՒՊԱԿԱՆ ԱՐԱՍՊԵՆՍԻՍՏԱՆԻ ԹԵՄԱ

Համեմատվող երեք բանահյուսական դորձերում մոտայուտ մաս՝ կանխազգացող հերոսները էական կարևորություն են տալիս իրենց թուրը ծով կամ լիճ նետելու հանգամանքին:

Հալ ժողովրդական մի հեքիաթում¹ հիվանդ ու մահամերձ թագավորը, որ իր սեծաթիվ հաղթանակներով պարտական է առասպելական թրին, կասշտում է երկր որդիներից ավազին՝ նրան կարգադրելով իր թուրը տանել և ծովը ղցել: Որդին թուրը պահելուց հետո վերադառնում է և հորը գեկուցում այն մասին, որ կատարել է ցուցումը: Հայրը հարցնում է. «Ի՞նչ պատահեց, երբ թուրը ծովը նետեցիր»։ «Ոչինչ»,— պատասխանում է որդին: Արքան դրանից եղբակացնում է, որ որդին պանջ է առել իր խոսքը: Նույն կերպ է վարվում նաև երկրորդ որդին: Սակայն կրտսերը ճշտորեն կատարում է հոր հրամանը՝ թուրը ծովը նետելով: Իրան հաջորդում է այն, որ ծովը մոլեգնում է և գազաններին ու թռչուններին շարտում է դուրս, դեպի երկինք: Տեղեկանալով ծովի այդ բուռն հակազդեցությանը, թագավորը վախճանվում է:

Նարդական դյուցազնեցության մեջ՝ Բատրաս հերոսը հոր մահվան վրեժը արյամբ լուծելով, կոտորում է գրեթե ամբողջ բնակչությանը, որից հետո որոշում է ինքն էլ մեռնել: Նա կանչում է ողջ մնացածներին և նրանց պարզազրում է իր թուրը ջուրը ղցել: Նարդերը վերադառնում են հանձնարարության կատարման մասին գեկուցելով: Բատրասը նրանց հարցնում է, ինչ երբ թուրը ծովը ընկղմվեց, ինչ տեղի ունեցավ: Նարդերը շփտեն ինչ պատասխան տան, ուստի հեռ են գառնում՝ հերոսի պահանջը կատարելու: Երբ թուրն ընկնում է ծովը, ջուրը մեկնե՞ն սկսում է եռ դալ, այլեքները ուռչում-բարձրանում են, սկսվում է փոթորկածուփ մրրիկը: Բատրասը այս ամենի մասին լսելով՝ կնքում է իր մահկանացուն:

Ժոնի Իրիսվարդը² բաղդատում է Բատրասի մահը Արթուր թագավորի մահվան հետ: Արքան փոխվում է այս աշխարհից՝ ունկնդրելով ընկերոջ պատմությունն այն մասին, որ իր էսկալիբր թուրը լիճն է նետվել: Բայց մինչև թուրը նետելը ընկերը երկու անգամ փորձում է խաբել թագավորին: Երրորդ անգամ, երբ նետում է թուրը, լճի մակերեսից վեր է բարձրանում մի ձևոր՝ բռնելով թուրը և անհետացնելով ջրի խորքերում:

¹ «Արա գեղեցիկ». Ավանդավեպ.—Աղագրական հանդես, N 9, Թիֆլիս, 1902, էջ 144—159: Հաղորդել է Սարաֆյանը Կարին բաղադրից. լսել է Շուշիում: Գրառել և հրատարակել է Ու. Հալալյանը: Տե՛ս նաև Գ. Ուրվան ձեռնագր. Համով-հոսով. Կ. Պոլիս, 1884, էջ 75—76. Բևեռ և Պոլսնը իր կամ Հարր գավառ.—Աղագրական հանդես, հ. 5, 1899, էջ 13—14:

² Georges Dumézil. Legendes sur les Nartes. Paris, 1930, p. 69.

³ Joël Grisward. Le motif de l'épée jetée au lac: la mort d'Arthur et la mort de Batradz. Romania, 1969, p. 289—340, 473—514.

Հայ արքայի երկու որդիները, կենդանի մնացած նարդերը և Արթուր թագավորի ընկերը փորձում են խաբել հերոսներին, որոնք նախօրոք դիտեն այն մանրամասները, թե ինչ է տեղի ունենալու թուրը ծով կամ լիճ նևտելուց հետո: Նշված հերոսները մահանում են, երբ ականջալուր են լինում ծովի ալեկոծության մասին պատմություններին, որոնց նկարագրությունը հայկական և նարգական զրույցներում նույնական է:

Անդրադառնանք այն պայմաններին, որոնցում հերոսները ձեռք են բերել իրենց թրերը: Այսպես, հայկական հեքիաթում թագավորը ականատես է լինում, թե ինչպես նախրապանի՝ կովերից մեկի վրա նետած քարը ծակում-անցնում է կենդանու մարմինը և ընկնում գետին: Նկատելով այդ արտակարգ դիպվածը, թագավորը հրամայում է իր համար թուր կոփել այդ կայծքարից (Երկաթից): Այս թուր-կեծակին կարող է ամենապինգ քարը պանրի պես կտրել:

Բնարասի թուրը հայրական ժառանգություն է:

Արթուր արքան հերոսանում է այն օրը, երբ ժայռի մեջ մխրճված թուրը դուրս է քաշում: Որքան էլ տարբեր են հերոսների՝ թրերին տիրանալու պարագաները, նրանք այդ թրերի շնորհիվ են սխրանքներ գործում: Երևք հերոսների կյանքը կապված է իրենց առասպելական թրերի հետ⁴:

Բանահյուսական զրույցները, որ գրառված են XIX—XX դարերում, Եվրոպայի պահպանողական շրջաններում, ինչպես, օրինակ, Իռլանդիայում, Իսլանդիայում և Կովկասում, մեզ են ընծայում այնպիսի առասպելական տվյալներ, որոնք նույնքան հինավուրց ու վաղնջական են, որքան դասական դիցաբանությունների նյութերը: Նույնը կարելի է ասել հայկական և նարգական բանահյուսական երկերի մասին:

Վերահիշյալ զուգանմանությունները բացառում են փոխառությունների հնարավորությունը՝ ցույց տալով այս երեք հնդեվրոպական ավանդությունների պատկանելությունը այդ ժողովուրդների ընդհանուր ժառանգությանը:

⁴ Հայ ժողովրդական մի հեքիաթում (հրատարակված Ե. Լալայանի կողմից 1910-ին, «Ազգագրական հանդեսում», հ. 19, էջ 115—135) պատվ կնոջը հաջողվում է զոգանալ հերոսի գորգը և նետել կրակի մեջ, որից հետո հերոսը մեռնում է: Նա վերակենդանանում է այն բանից հետո, երբ իր եղբայրները, գորգը կրակից հանելով, սառեցնում են այն: Հնդկաստանի Փենջաբի շրջանում գրի առնված մի հեքիաթում (է. Քոսկեն. Լորենի ժողովրդական հեքիաթներ. Փարիզ. հ. 1, 1887, էջ 25) նույնպես մի պատվ կին զոգանում է իշխանի թուրը, որը դցում է կրակի մեջ: Դրանից իշխանը մահանում է: Դարբինը, թրի կտորները հավաքելով, մի նոր թուր է ձուլում, ինչի հետեանքով իշխանը հարություն է առնում: Այս հեքիաթներում ևս նկատելի է հերոսի կյանքի և նրա զենքի միջև եղած կապի հնդեվրոպական թեման: Թուրը, հզորության և իշխանության սիմվոլն է, որը գերբնական ուժերի կողմից է ստացվել: